

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ
(19-20-ԲԳ ԴԱՐԵՐ)**

Վլադիմիր Պողոսյան

Աֆղանական հասարակության «պառակտման» պատճառը ոչ միայն ազգային-ցեղային բազմազանությունն է, այլև ցեղերի միջև սուր մրցակցությունը: Դարեր շարունակ փուշտունները մշտական թշնամանքի մեջ են եղել միմյանց հետ և հաճախ զինված հակամարտությունների առաջացման պատճառ էին վարելահողի, արոտավայրերի և ոռոգման ջրի համար վեճերը: Լուրջ ապակայունացնող գործոն էր հանդիսանում ցեղային երկու խոշոր դաշինքների՝ Գիլզայի և Դուրանի միջև ձևավորված երկարատև թշնամանքը: Երկար ժամանակ Գիլզայի ցեղերի ներկայացուցիչները չէին նշանակվում Աֆղանստանի իշխանության բարձրագույն պաշտոններում, իսկ Դուրանի-Հելբարակզայ ցեղի ներկայացուցիչները մըշտապես զբաղեցնում էին առանցքային պաշտոններ: Աֆղանական հասարակության մեջ առկա հակասությունների, ազգամիջյան հարաբերությունների լարվածության հիմնական պատճառներից են համաաֆղանական մակարդակով ցեղային ինստիտուտների առկայությունն ու այդ ինստիտուտների միջև միասնության բացակայությունը:

Աֆղանստանում կրոնական ֆունդամենտալիզմի¹ (արմատականու-

¹ Ֆունդամենտալիզմը հասկացությունը ձևավորվել է ԱՄՆ-ում քրիստոնեության բողոքական ուղղությունում: 1895 թ. Նիագարայում տեղի ունեցած Աստվածաշնչյան կոնֆերանսում հոգևորականների մի խումբ առաջ քաշեց 5 հիմնական «ֆունդամենտալ» սկզբունք, որոնք 1910 թ. հաստատեց Պրեսբիտերական գլխավոր ասամբլեան: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան ֆունդամենտալիստները իրենք իրենց կոչեցին ավետարանչականներ, իսկ ֆունդամենտալիզմ տերմինը մնաց շրջանառության մեջ և իր նեղ իմաստով մեկնաբանվում է որպես աստվածաբանական շարժում, որը նպատակաուղղված է պահպանելու այն ամենը, ինչը քրիստոնեության հիմքն է (ֆունդամենտ):

Տե՛ս **Գրիգորյան Ս.**, Իսլամական արմատականությունը Կովկասում (ծայրահեղ արմատական դրսևորումներն ու ներկա միտումները), Երևան, ԵՊՀ հրատ., 2017, էջ 18-19:

Филатов С. Б., «Фундаментализм». Возвращение к основам, Протестантский фундаментализм, М., 2003, стр. 109-126.

թյան) և ֆանատիզմի զարգացման ընթացքը ցույց տվեց, որ այդ կրոնական արմատականության դրևորումները հասարակական հարաբերություններում շատ կարևոր դեր են կատարում և նպաստում են ճգնաժամային իրավիճակի զարգացմանն ու պահպանմանը: Այն հիմնված է որոշակի սկզբունքների, գաղափարների և արժեքների վրա, որոնք դիտարկվում են որպես հիմնարար ճշմարտություններ՝ անկախ դրանց բովանդակությունից: Որպես հիմնական խնդիրներից մեկը՝ կրոնական ֆունդամենտալիզմը համարում է վերադարձը կրոնական կառույցներին և հասարակության գերիշխող դիրքերին¹: Հետազոտությունների ընդհանրական եզրակացությունն այն է, որ իսլամում արմատականությունը հասկացվում է որպես քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար իսլամական զանազան խմբավորումների կողմից պայքարի այնպիսի մեթոդների կիրառում, որոնք միջազգային իրավունքի տեսակետից օրենքի սահմաններից դուրս են²:

Այսպիսով, արմատական դիրքերից հանդես եկող իսլամական կրոնական ֆունդամենտալիզմի հիմնական նպատակներն ամենևին էլ «մաքուր» իսլամի վերականգնման մեջ չեն, այլ սոցիալական և քաղաքական իրավիճակի ապակայունացման: Ըստ ակադեմիկոս Ե.Մ. Պրիմակովի՝ իսլամական ֆունդամենտալիզմն սկսեց դրսևորվել 20-րդ դարավերջին՝ մահմեդադավան պետությունների արագ զարգացման, միջազգային ասպարեզում նրանց ազդեցության աճի և նրանց միջև կրոնական հարաբերությունների մերձեցման արդյունքում³:

Աֆղանստանում իսլամի քաղաքականացման գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ իսլամը դարձել է համաշխարհային հասարակական-քաղաքական կյանքի որոշիչ գործոն, առանց որի իսլամադավան տարածաշրջանների ապագա զարգացման որևէ լուրջ կանխատեսում պարզապես անհնար է: Իսլամը նաև Աֆղանստանի ողջ բնակչության միավորիչ գործոն է, իսկ հոգևորականությունը վայելում է բացար-

¹ **Arthur Goldschmidt Jr.**, «A Concise History of the Middle East», Boulder, Colo.: Westview Press, 1988, p. 231.

² Исламский экстремизм и фундаментализм как угроза национальной безопасности России, Научный отчет Российского института стратегических исследований / Под. Общ. ред. Е. М. Кожокина, М., 1995, стр. 14.

³ **Примаков Е.М.**, Вызовы и альтернативы многополярного мира: роль России (отв. ред. П.А. Цыганков, И.И. Кузнецов), М.: Изд-во Московского ун-та, 2014, с. 50.

ծակ հնարային վստահություն: Պետք է նշել, որ Աֆղանստանի իսլամադավան բնակչության 98 տոկոսից մոտ 84 տոկոսը սուննի, իսկ 15 տոկոսը շիա ուղղության հետևորդներ են¹:

Աֆղանստանում հանաֆիական համոզմունքի սուննի իսլամը հանդիսանում է պետական կրոն: Այն դավանում են փուշտունները, ուզբեկները, թուրքմենները, բելուջները, տաջիկներից շատերը և այլ էթնիկ խմբեր: Որոշ իսլամական գաղափարախոսներ կրոնի սկզբնական հիմքերի վերածնունդը տեսնում են ֆունդամենտալիստների կողմից իշխանության բռնազավթման և Շարիաթի վրա հիմնված ֆունդամենտալիստական քաղաքական մոդելի հաստատման մեջ²:

«Իսլամիստական արմատականությունը և ծայրահեղականությունը» ունի գերարմատական դրսևորում, որը ի տարբերություն արմատականության ունի հստակ բացասական նշանակություն և գործնականորեն բնութագրվում է միջազգային իրավունքի շրջանակներից դուրս պայքարի մեթոդների կիրառմամբ³: 19-րդ դարի աֆղան քաղաքական գործիչ, բարեփոխիչ և քարոզիչ Սեյիդ Ջամալ ադ-Դին Աֆղանին⁴ փորձեց հիմնավորել իսլամի դերակատարումը իսլամական աշխարհում, ներառյալ Աֆղանստանում տեղի ունեցող քաղաքական գործընթացներում: Աֆղանին կարծում էր, որ քաղաքական նպատակներին հասնելու հնարավոր ուղին իսլամին և նրա օրենքներին՝ շարիաթին հետևելն է: Այս գաղափարը 20-րդ դարում մշակվեց Մուհամեդ Աթաուլլահ Ֆայզանիի կողմից, որի արդյունքում իսլամը դարձավ Աֆղանստանի քաղաքական գործընթացների վրա ազդող լրջագույն գործոն:

¹ Религиозная (конфессиональная) структура населения стран мира, "География", 2003, № 3-4.

<http://www.demoscope.ru/weekly/2004/0161/analit06.php> (Հղված է 08.08.2021)

² **Сажин В.И.**, К вопросу о цивилизациях, исламе и войнах // Ближний Восток и современность. Институт изучения Израиля и Ближнего Востока, М., 1998, с. 207.

³ Տե՛ս **Добаев И.П.** Исламский радикализм: сущность, идеология, политическая практика: дис. ... дра филос. наук. Ростов-на-Дону, 2003, с. 61-62. Jemkins B. International terrorism: A New Modeof Conflict. – Los Angeles, 1975.

⁴ **Степанянц М. Т.**, Афгани Мухаммад б. Сафдар Джамал ад-Дин, ал // Новая философская энциклопедия / Ин-т философии РАН; Нац. обществ.-науч. фонд; Предс. научно-ред. совета В. С. Стёпин, заместители предс.: А. А. Гусейнов, Г. Ю. Семигин, уч. секр. А. П. Огурцов. — 2-е изд., испр. и допол. — М.: Мысль, 2010.

Իսլամի բարեփոխիչներն իրենց մոտակա նպատակներ հռչակեցին պանիսլամիզմի գաղափարների հանրահռչակումը, գաղութատիրության դեմ պայքարում մուսուլման եղբայրների մոբիլիզացիան, իսլամական պետության իդեալական մոդելի ստեղծումը¹: Հայտնի ազգային, հասարակական գործիչները, գիտնականները, գրողները փորձեցին ամրապնդել և հանրայնացնել այս ուտոպիստական հայեցակարգի տեսական և գործնական հիմքերը: Այս ենթախորքին հստակորեն արտահայտվեց իսլամի քաղաքականացման միտումը, որին նպաստեց ներքին և արտաքին գործոնների համադրությունը:

Ֆունդամենտալիստական գաղափարախոսության և կրոնական կազմակերպությունների ստեղծման պատճառները ոչ միայն Աֆղանստանում զարգացող ներքին կրոնական գործընթացներն էին, այլև շխարհում տեղի ունեցող բազմաթիվ սոցիալ-տնտեսական և քաղաքական կերպափոխությունները: Այս մարտահրավերները Աֆղանստանի կառավարությունից և հասարակությունից պահանջում էր հնարավորինս համարժեք պատասխաններ և բարեփոխումներ երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Աֆղանական կառավարող շրջանակները գիտակցում էին, որ առաջադեմ բարեփոխումների հիմնական արգելակը կրոնական կազմակերպություններն ու հոգևորականությունն է, որոնց փորձեցին աստիճանաբար հեռացնել ազդեցության հնարավորություններից²: Ամանուլլահ խանի օրոք պետական կառավարման համակարգում բարեփոխումների քաղաքականության իրացմանը զուգընթաց (1919-1920 թթ), որոշակիորեն կասեցվեց հոգևորականության ազդեցությունը: Հետագայում, Մուհամմադ Ջահիր շահի գահ բարձրանալուց (1933) հետո մինչև նախագահ Նաջիբուլլահի վարչակարգի անկումը (1992), հոգևորականների ազդեցությունը և նրանց վերահսկողությունը դատական իշխանության և հանրակրթական համակարգի վրա գործնականում կրճատվեց մինչև զրոյականի: Նույնիսկ Ջահիր շահի օրոք ընդունված 1964 թ-ի Սահմանադրության մեջ ամրագրված էր, որ «կրոնական նորմերի և ծեսերի պահպանումը» պարտադիր չէ, ինչպես սահմանված էր նախորդ սահմանադրական օրենքով («Հիմնական օրենք» 1931

¹ Ислам в мировой политике в начале XXI века, <https://mgimo.ru/upload/iblock/898/ислам.pdf> (<ղված է 12.08.2021)

² **Армстронг К.**, Битва за Бога. История фундаментализма, М., 2013, с. 141.

թ.), որն ուղղակիորեն վկայում էր հասարակական կյանքում հոգևորականության ազդեցության անկման մասին¹:

Տրադիցոնալիզմի (ավանդականություն) և ֆունդամենտալիզմի (արմատականություն) առաջացումը արձագանքն էր 1950-70-ական թվականներին իշխող վարչակարգի կողմից իրականացվող արդիականացման քաղաքականությանը: Սկզբնապես մահմեդական հոգևորականության ներկայացուցիչները, այդ թվում նաև ֆունդամենտալիստները, չէին ձգտում իշխանազավթման, այլ ցանկանում էին վերականգնել բարեփոխումների արդյունքում խախտված աշխարհիկ և հոգևոր վարչակարգերի միջև հավասարակշռությունը: Աֆղանական հոգևորականության վրա մեծ ազդեցություն ունեցավ Եգիպտոսի «Մուսուլման եղբայրներ» շարժման² իդեալական հասարակություն կառուցելու և Ա.Մաուդուդիի գաղափարները³: Ֆունդամենտալիստները, որոնք տեղծեցին հստակ կառուցվածքով և խիստ կարգապահությամբ կազմակերպություններ, հետագայում սկսեցին առաջատար դեր խաղալ քաղաքական գործընթացներում և արագորեն վերածվեցին իշխող վարչակարգի ընդդիմության:

Աֆղանստանում իսլամի քաղաքականացման գործընթացի ամ-

¹ Конституция Афганистана, Кабул, 1964, с. 24-25.

² 1970-ականներին «Մուսուլման եղբայրներ» շարժումը փորձեց դուրս գալ համալսարանական միջավայրեից: Երիտասարդ իսլամիստները բացեցին քաղաքական-կրոնական քարոզարշավը ամբողջ երկրում, որի քարոզչական մեխանիզմներից մեկը կոչվում էր *da'wat O tanzim* (քարոզչություն և կազմակերպում): Քաղաքում ուսանողները քարոզում էին տեղի մզկիթներում՝ փաստացի զրկելով քաղաքային հոգևորականությանը իրենց ազդեցությունից: Իրենց հերթին հոգևորականները սակավաթիվ էին, վատ կրթված և կառավարամետ:

Roy, Olivier. *Islam and Resistance in Afghanistan*. Cambridge University Press, 1990, p. 73.

³ Պակիստանցի Աբու Ալա Մաուդուդիի (1903-1979) գաղափարները շատ տարածված են արաբական աշխարհում: Իր «Իսլամական իրավունք և սահմանադրություն» աշխատության մեջ Մաուդուդին մանրամասնորեն մշակում է «կատարյալ» իսլամական պետության տեսությունը, որը պետք է հիմնված լինի «Ալլահի և ժողովրդի իշխանության», կամ, ինչպես ինքն է մեկնաբանում, «թեոկենտրալիստի» (ի տարբերություն «աստվածապետության», որի ներքո հասկացվում է հոգևորականների իշխանությունը, որը Մաուդուդին անվանում էր «սատանայական») վրա:

Zebiri, Kate. Review of *Maududi and the making of Islamic fundamentalism*. Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol. 61, No. 1.(1998), pp. 167-168.

րապնդման արտաքին քաղաքական գործոնը համաշխարհային տերությունների՝ աշխարհաքաղաքական և գեոստրատեգիական շահերի, ազդեցության ոլորտների համար մրցակցությունն ու պայքարն էր: Աֆղանական պետությունը վերածվեց շահերի և ժողովրդավարական ազատությունների պաշտպանության ասպարեզի և հակամարտության երկրատև ճգնաժաման արդյունքում նկատելի էին ազգամիջյան և կրոնական երանգները: «Մուսուլման եղբայրներ» արմատական կազմակերպության հիմքի վրա տարածում գտած ծայրահեղական և ահաբեկչական կազմակերպությունների խնդիրը իսլամական պետության ստեղծումն էր¹: Երկրում երկարատև ճգնաժամերը նպաստեցին պայքարի ծայրահեղական և ահաբեկչական մեթոդների հանրահռչակմանը:

Մինչ Ձահիր շահի սահմանադրական բարեփոխումները՝ 1950-ական թվականների վերջին և 60-ականների սկզբին երկրում նկատելի էր իսլամիստների քաղաքական ակտիվությունը, որն առաջին հերթին պայմանավորված էր Աֆղանստանի հասարակական-քաղաքական կյանքի ազատականացմամբ, և երկրորդ, արաբական աշխարհում և հարևան Պակիստանում իսլամիստական կազմակերպությունների գաղափարախոսական ազդեցությամբ: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ տարածաշրջանում ու բուն Աֆղանստանում Խորհրդային Միության ազդեցության ընդլայնումը իսլամիստների կողմից դիտարկվում էր որպես սպառնալիք իսլամական արժեքների համար:

Աֆղանական պետության պատմության բոլոր շրջափուլերում իսլամական արմատականությունը, ֆունդամենտալիզմը և ծայրահեղականությունը մշտապես վայելել են բնակչության պահպանողական մասի աջակցությունը: Ավանդաբար Աֆղնաստանը համարվել և համարվում է կրոնական և պահպանողական, արմատական կազմակերպությունների գործունեության ծավալման ռիսկային տարածք: 1978 թ-ի իրադարձություններից հետո Աֆղանստանում սկսված կրոնական վերածնունդը հանգեցրեց պետական քաղաքական համակարգի և բնակչության իսլամիստական հատվածի միջև առճակատման, որոնք իրենց առջև խնդիր էին դրել զավթել իշխանությունը և Աֆղանստանը վերածել իսլամական պետության: Իսլամական ֆունդամենտալիստների հիմնական կազմա-

¹ **Коргун В.Г.**, Ислам и государственная власть в Афганистане // Афганистан: война и проблемы мира. М., 2000, с. 67.

կերպություններն են Աֆղանստանի իսլամական կուսակցությունը (ԱԻԿ) և Աֆղանստանի իսլամական հասարակությունը (ԱԻՀ)¹, որոնք ձևավորվել են Աֆղանստանից դուրս և իրենց ազդեցությունն են ունեցել աֆղանական հասարակության և երկրում տեղի ունեցող ժողովրդագրական (արտագաղթ) գործընթացների վրա²: Հետագայում, պատերազմական իրադրության զարգացման շրջանակներում իսլամիստները որպես հարվածող ուժ գործադրվեցին կենտրոնական իշխանության դեմ պայքարում:

Պետք է նշել, որ աֆղանական իսլամիտական արմատականության առաջնորդները հատուկ ուշադրություն էին դարձնում պետության և հանրային կյանքի իրավական ասպեկտներին, քանի որ կրոնը հիմնված է մի շարք իրավական և բարոյական նորմերի վրա: Օրինակ, շարիաթի օրենքները թալիբների կողմից բռնի կերպով տարածեցին հասարակության սոցիալական և առօրեական կյանքի բոլոր ոլորտների վրա³, որոնց ուսումնասիրողներից ոմանք ներկայացնում են «նեոֆունդալիստներ»⁴: Աֆղանստանի քաղաքական անկայունության գործոններից մեկը արմատական իսլամիտական շարժումներն են, որոնց ծագման և ձևավորման պատմական ընթացքի ուսումնասիրությունը արդիական է ոչ միայն այս երևույթի ավելի խորքային ընկալման տեսանկյունից, այլև մահմեդադավան բնակչությամբ երկրների քաղաքական գործընթացների բացահայտման անհրաժեշտության տեսանկյունից:

20-րդ դարի երկրորդ կեսից աֆղանական հասարակության մեջ նկատվեց կրոնական արմատականության տարբեր ձևերի կտրուկ աճ, որն արտահայտվեց ծայրահեղականության և ահաբեկչության ամե-

¹ **Слинкин Ю.М.**, "Ассоциация братьев-мусульман" и исламизм в Афганистане // *Культура народов Причерноморья*, 2006, № 93, с. 75-80.

² **Vali Nasr**, "Islamic Extremism and Regional Conflict in South Asia," in *Prospects for Peace in South Asia*, ed. R. Dossani and H. S. Rowen, Hyderabad: Orient Longman Private, 2006, p. 26.

³ **Сикоев Р. Р.**, Правление на основе шариата (на примере Исламского Эмирата талибов) // *Ислам на современном Востоке: Регион Ближ. и Сред. Востока, Юж. и Центр. Азии*. М.: Ин-т востоковедения РАН: Крафт, 2004, с. 118.

⁴ **Roy. O.**, *Has Islamism a future in Afghanistan? Fundamentalism reborn? Afghanistan and the Taliban*. Lahore, Karachi, Islamabad, 1998, pp. 199-211.

նաարմատական ձևերով: Երկրում ակտիվորեն գործում են արմատական իսլամական կազմակերպություններ, որոնք իրենց առջև նպատակ են դրել միավորել աշխարհի մուսուլմաններին մեկ էմիրության կամ խալիֆայության մեջ, որոնք արևմտյան ժողովրդավարությունն ու արժեքներն անընդունելի են համարում մահմեդականների համար: Առաջնորդվելով վաղ մահմեդական համայնքի ապրելակերպին և հավատին վերադարձի կոչերով՝ կրոնական շարժումների առաջնորդներն իրենց ներկայացնում են որպես իսլամի մարտիկներ:

Պատմական փաստերը հուշում են, որ աֆղանական պետությունն իր ձևավորման և զարգացման ընթացում, համակարգված կերպով բախվել է տարբեր մակարդակի ճգնաժամերի: Ճգնաժամային իրավիճակի առաջացումը այս կամ այն դարաշրջանում կապված էր ներքին և արտաքին տարբեր գործոնների հետ: Վտանգն այն է, որ համակարգային ճգնաժամը շատ բացասական ազդեցություն ունի էթնիկական և կրոնական գործընթացների վրա, որոնք Աֆղանստանը վերածել են սպառնալիքների և մարտահրավերների օջախի ոչ միայն տարածաշրջանի, այլև ամբողջ համաշխարհային հանրության համար:

Աֆղանական ճգնաժամի ներքին և արտաքին գործոնների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն բարդ բնույթ ունի և ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ քաղաքական, տնտեսական, էթնո-կրոնական և մշակութային: Աֆղանստանի զարգացման պատմության տարբեր շրջափուլերում բրիտանացիները, ռուսները, ամերիկացիները, պակիստանցիները Աֆղանստանում ներքաղաքական գործոնները, ազգային առանձնահատկությունները և ավանդույթներն ակտիվորեն օգտագործեցին իրենց աշխարհաքաղաքական և ազգային շահերին ծառայեցման համար: Աշխարհագրական դիրքի շնորհիվ Աֆղանստանը գերակա կարգավիճակ ունի համաշխարհային աշխարհաքաղաքական համաձիգում, որտեղ հատվում են գերտերությունների գեոստրատեգիական և աշխարհատնտեսական շահերը: Համաշխարհային և տարածաշրջանային տերություններն ակտիվորեն օգտագործում են աֆղանական հասարակության ներքին հակասությունները՝ սեփական աշ-

¹ Davidson L. Islamic Fundamentalism: An Introduction: An Introduction. – ABC-CLIO, 2013. <https://www.degruyter.com/document/doi/10.1525/9780520964037/html> (Հղված է 13.08.2021)

խարհաքաղաքական նախագծերի իրացման համատեքստում: Որոշակիորեն կարելի է պնդել, որ Աֆղանստանը վերածվել է համաշխարհային և տարածաշրջանային տերությունների մրցակցության հարթակի, որտեղ շահագրգիռ տերություններից յուրաքանչյուրն իրականացնում է աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նախագծերը:

Բանալի բառեր՝ Աֆղանստան, աֆղանական հասարակություն, ցեղային ինստիտուտներ, ժողովրդագրական գործընթացներ, ֆունդամենտալիզմ, ֆանատիզմ, հանաֆիականություն, պանիսլամիզմ, «Մուսուլման եղբայրներ»:

ИСЛАМСКИЕ РАДИКАЛЬНЫЕ ДВИЖЕНИЯ В АФГАНИСТАНЕ (19-20 ВВ.)

Владимир Погосян

Ключевые слова: Афганистан, афганское общество, племенные институты, демографические процессы, фундаментализм, фанатизм, ханафизм, панисламизм, «Братья-мусульмане».

Ислам стал решающим фактором мировой общественно-политической жизни, без которого любое серьезное прогнозирование будущего развития исламских регионов просто невозможно.

В статье рассматривается процесс развития религиозного фундаментализма (радикализма) и фанатизма в Афганистане, проявление религиозного радикализма в общественных отношениях, религиозных и религиозно-сектантских факторов, которые способствуют развитию и сохранению кризисных ситуаций. Со второй половины XX века в афганском обществе наблюдается резкий рост различных форм религиозного радикализма, который проявляется в наиболее радикальных формах экстремизма и терроризма. В стране существуют радикальные исламские организации, которые стремятся объединить мусульман мира в один эмират или халифат, которые считают западную демократию и ценности неприемлемыми для мусульман.

Благодаря своему географическому положению Афганистан занимает доминирующее положение в мировом геополитическом комплексе, где пересекаются геостратегические и геоэкономические интересы сверхдержав. Мировые и региональные державы активно эксплуатируют внутренние противоречия афганского общества в контексте реализации собственных геополитических проектов.

ISLAMIC RADICAL MOVEMENTS IN AFGHANISTAN (19TH-20TH CENTURIES)

Vladimir Poghosyan

Keywords: *Afghanistan, Afghan society, tribal institutions, demographic processes, fundamentalism, fanaticism, Hanafism, pan-Islamism, "Muslim Brotherhood".*

Islam has become a decisive factor in world socio-political life, without which any serious prediction of the future development of Islamic regions is simply impossible.

The article examines the development of religious fundamentalism (radicalism), fanaticism in Afghanistan, the implications of religious radicalism in public relations, and religious-sectarian factors that contribute to the development and perpetuation of the crisis situations. Since the second half of the 20th century, there has been a sharp rise in various forms of religious radicalism in Afghan society, manifested in the most radical forms of extremism and terrorism. Radical Islamic organizations are active in the country with the aim of uniting the Muslims of the world into one emirate or caliphate, which considers Western democracy and values unacceptable to Muslims.

Due to its geographical location, Afghanistan has a dominant position in the world geopolitical complex, where the geostrategic-geo-economic interests of the superpowers intersect. World and regional powers are actively exploiting the internal contradictions of Afghan society in the context of implementing their own geopolitical projects.

Վլադիմիր Պողոսյան - ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի հայցորդ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս

Владимир Погосян - соискатель кафедры Всеобщей истории ЕГУ, преподаватель кафедры Истории Армении и социальных наук Иджанского филиала ЕГУ

Vladimir Poghosyan - applicant of YSU Chair of World History, lecturer at the Chair of Armenian History and Social Sciences, Ijevan Branch YSU